ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Անհրաժեշտությունը

«Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 13-ի թիվ 41-Ա որոշման 5-ի կետի ապահովմամբ և գործող՝ «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 2-րդ կետի 1, 3 և 4 ենթակետերով սահմանված պետական քաղաքականության հիմնական նպատակների իրականացման անհրաժեշտությամբ, մասնավորապես՝ ընկերությունների պետական բաժնեմասի մասնավորեցման միջոցով դրանց գործունեության արդյունավետության բարձրացմամբ, մրցակցային միջավայրի բարելավմամբ, երկրի ՀՆԱ-ի ձևավորման մեջ մասնավոր կապիտալի տեսակարար կշռի ավելացմամբ, ինչպես նաև պետական գույքի մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին ՀՀ պետական և համայնքային բյուջեների եկամուտների ավելացմամբ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Կառավարության 2022 թվականի հունվարի 13-ի թիվ 41-Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) «Հեր-Հեր» հիդրոէլեկտրակայան» և «Արմենիկում» փակ բաժնետիրական ընկերությունների (այսուհետ՝ Ընկերություններ)՝ 100 տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝ հետագայում մասնավորեցման ծրագրում ընդգրկելու և մասնավորեցնելու նպատակով:

Որոշման 5-րդ կետով հանձնարարվել է՝ նշված ընկերությունների կանոնադրությունների մեջ համապատասխան փոփոխությունների պետական գրանցումը և պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտելուց հետո եռամսյա ժամկետում ՀՀ

կառավարության քննարկմանը ներկայացնել պետական գույքն օտարելու (մասնավորեցնելու) վերաբերյալ առաջարկություն:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2022թ. մարտի 15-ի թիվ ԳՍ/27.3/6355-2022 գրությամբ տեղեկացվել է, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՀՀ պաշտպանության նախարարության միջև ստորագրվել են Ընկերությունների բաժնետոմսերի հանձնման-ընդունման ակտերը և Որոշմամբ սահմանված դրույթների ամբողջական կատարումն ապահովելու նպատակով առաջարկվել է նախաձեռնել Որոշման 5-րդ կետով նախատեսված գործընթացը:

Որոշման 5-րդ կետով նախատեսված «ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել պետական գույքն օտարելու վերաբերյալ առաջարկություն» հանձնարարականն ապահովելու նպատակով ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից նախապատրաստվել է Նախագիծը՝ Ընկերություններն ընդգրկել մասնավորեցման ծրագրի ցանկում, ինչը հնարավորություն կտա մասնավորեցնել Ընկերությունների պետական բաժնետոմսերը:

Համաձայն ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեում իրականացվող ընկերությունների մոնիտորինգի՝ «Արմենիկում» ՓԲԸ-ն 2019 թվականի և 2020 թվականի տարեկան տվյալներով աշխատել է վնասով, «Հեր-Հեր» հիդրոէլեկտրակայան» ՓԲԸ-ն՝ շահույթով:

Պետական գույքն օտարելու (մասնավորեցնելու) դրույթը Որոշմամբ ամրագրելով՝ ՀՀ կառավարությունն արդեն իսկ արտահայտել է իր վերաբերմունքը՝ գտնելով ոչ նպատակահարմար Ընկերությունների հետագա գործունեությունը պետության վերահսկողությամբ:

Նախագծով առաջարկվել է.

«Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-95-Ն օրենքի 1-ին հավելվածի 47-րդ կետից հետո լրացնել նոր բաժին հետևյալ բովանդակությամբ.

«

«Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն			
48.	90125	«Արմենիկում» ՓԲԸ	ք. Երևան, Նալբանդյան-37
49.	90126	«Հեր-Հեր» հիդրոէլեկտրակայան» ՓԲԸ	Վայոց ձորի մարզ, համայնք Արին, Արին-Հերհեր ճանապարհի թիվ 6 հիդրոէլեկտրակայան

»

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

«Հեր-Հեր» հիդրոէլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող գործունեությունը չի համարվում մենաշնորհային, Հայաստանի Հանրապետության հիդրոէլեկտրակայանների գերակշռող մասը մասնավոր են, իսկ պետության սեփականության ներքո ընկերության բաժնետոմսերը պահելու համար սահմանափակումներ չկան:

Ինչ վերաբերում է «Արմենիկում» ՓԲԸ-ին՝ ոլորտը կարգավորող օրենքները չեն արգելում համանման ծառայության մատուցումն այլ կազմակերպությունների կողմից:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

«Արմենիկում» փակ բաժնետիրական ընկերության՝ մասնավորեցման ծրագրի ցանկում ընդգրկումը բավարարում է Օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին, մասնավորապես տվյալ ընկերությունների ոչ արդյունավետ կառավարումը, ոչ մրցունակ լինելը, ընկերություններին վերապահված պարտավորությունների կարևորության մակարդակի նվազումը և տվյալ ընկերությունների պետական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ չլինելը:

Միաժամանակ Ընկերությունների՝ մասնավորեցման ծրագրի ցանկում ընդգրկումը բավարարում է Օրենքի 4-րդ հոդվածի պահանջներին՝ վերջիններս ընդգրկված չեն այն ճյուղերում և ոլորտներում, որոնցում մասնավորեցում չի նախատեսվում:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Նախագիծը մշակվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի աշխատակազմի կողմից:

6. Ակնկալվող արդյունքը

Ընկերությունների առավել արդյունավետ գործունեության իրականացում, ընկերությունների մասնավորեցման արդյունքում պետական բյուջեի մուտքերի ավելացում:

7. Այլ տեղեկություններ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը Ընկերությունների հետ համատեղ ավարտել են Ընկերությունների կանոնադրությունների փոփոխությունների պետական գրանցման գործընթացները:

8. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ:

Նախագիծը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1902-Լ որոշման 103-րդ կետի պահանջներից՝ Նպաստավոր ներդրումային միջավայրի ձևավորում և արժեթղթերի շուկայի կայացում, ինչպես նաև ֆոնդային բորսայի միջոցով համեմատաբար բարձր շահութաբերություն ունեցող պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների մասնավորեցման գործընթացի իրականացման նպատակով մասնավորեցման ենթակա գույքի կազմի և թվաքանակի ճշգրտման արդյունքում «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ: